ՀՀ, Լոռու մարզի մարզպետ

Անդրեյ Ղուկասյանին

Դիմող՝ Անուշավան Վոլոդյայի Աբազյան

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սան. Սարահարթ 2 շ, 28 բն 21

Հեռ.՝ 098-55-18-07

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

1988 թ-ի երկրաշարժից առաջ ես և իմ ընտանիքը բնակվել ենք Լոռու մարզի Լեռնապատ գյուղի 17 փողոց 39 տնակում: 1988 թ-ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների հերթացուցակում հաշվառված է եղել հանգուցյալ մայրս՝ Ռոզա Աբազյանը իր հինգ հոգանոց ընտանիքով, **3 սենյականոց բնակելի տուն ստանալու համար:** Սկզբում տան վթարային վիճակը գնահատված է եղել 4-րդ կարգ, այնուհետև առանց մեր իմացության կատարվել է նոր գնահատում, որով դարձել է 3-րդ կարգ, և որի պատճառով մեր ընտանիքը դուրս է մնացել երկրաշարժի հետևանքով աղետի գոտու գյուղական բնակավայրերում իրականացվող բնակարանային ապահովման կամ աջակցության ցուցակներից: Նշեմ նաև, որ տան կառուցման համար ինձ հատկացվել է տնամերձ, սակայն առ այսօր որևէ շինարարություն չի կատարվել այդ տարածքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը:

1. Ես՝ Անուշվան Աբազյանս, այժմ գտնվու՞մ եմ բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառված անձանց ցուցակների մեջ, թե ոչ:

2. Եթե այո, ապա ե՞րբ և ի՞նչ ժամկետներում է նախատեսվում երկրաշարժի հետևանքով վթարված իմ բնակարանի պայմանների բարելավման աշխատանքների կատարումը:
3. Եթե այժմ հաշվառված չեմ, ապա նախկինում երբևէ հաշվառված եղե՞լ եմ բնակարանային ապահովություն ստանալու համար, թե ոչ:
4. Եթե այո, ապա ե՞րբ եմ եղել հաշվառված, և ե՞րբ ու ի՞նչ հիմքով է իմ անունը դուրս եկել հաշվառված անձանց ցանկից:
5. Եթե նախկինում հաշվառված չեմ եղել, ապա ի՞նչ հիմքով է ինձ տրամադրվել բնակարանի կառուցապատման նպատակով հողատարածք:
6. Ե՞րբ և ի՞նչ ժամկետներում է պետության կողմից իրականացվելու այդ հողատարածքում բնակարանի կառուցումը:
7. Ի՞նչ հիմքով և ի՞նչ փորձաքննությունների արդյունքում է իմ բնակարանի վթարային վիճակը 4-րդ կարգից դարձել 3-րդ կարգ: Խնդրում եմ տրամադրել կատարված փորձաքննությունների և դրանց հիման վրա կայացված որոշումների համապատասխան փաստաթղթերը:
8. Արդյո՞ք 3-րդ կարգի վթարայնությամբ բնակարանային պայմաններ ունեցող անձինք ենթակա չեն բնակարանային ապահովության կամ բարելավման: Եթե ենթակա են, ապա ե՞րբ և ի՞նչ կարգով է իրականացվելու այդ ապահովումը:
9. Արդյո՞ք Լեռնապատ համայնքում եղել են ընտանիքներ, որոնց բնակարանային պայմանների վիճակը գնահատվել է 3-րդ կարգ, սակայն ստացել են բնակարանային ապահովություն կամ բարելավում: Եթե այո, քանի՞ ընտանիք է Լեռնապատ համայնքում 3-րդ կարգի պայմաններում ստացել բարելավում և ի՞նչ ձևով է արտահայտվել այդ բարելավումը: (վերանորոգում, նոր բնակարանի հատկացում...)

Վերոգրյալ բոլոր հարցադրումներին պատասխանելուց զատ, **խնդրում եմ տրամադրել** նաև 1988 թվականից առ այսօր, Լեռնապատ համայնքում բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառված, և այս տարիների

ընթացքում բնակարանային աջակցություն կամ բարելավում ստացած անձանց ցուցակները, ինչպես նաև այն անձանց ցուցակները, որոնք դեռևս բնակարանային ապահովում չեն ստացել, սակայն գտնվում են հերթում:

Միաժամանակ հայտնում եմ, որ Լեռնապատ համայնքում բնակվել են երկու՝ Ռոզա Աբազյան անուն ազգանունով քաղաքացիներ, այնպես որ տեղեկատվությունը կխնդրում եմ տրամադրել **բացառապես Ռոզա Գրիգորի Աբազյանի և նրա ընտանիքի վերաբերյալ**:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կից ներկայացնում եմ անձս հաստատող փաստաթղթի պատճեն

Հարգանքով՝ Անուշավան Աբազյան

30.10.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ
ԱԲԱԶՅԱՆ

ՍԵՌ
Ա

ԱՆՈՒՆԸ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է
08.11.1971

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է
24.10.2012

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
24.10.2022

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
055

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ /SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT No.
AM0913996

SURNAME(S)
ABAZYAN

NAME
ANUSHAVAN

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
08 NOV 1971

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
24 OCT 2012

DATE OF EXPIRY
24 OCT 2022

AUTHORITY
055

P<ARMABAZYAN<<ANUSHAVAN<<<<<<<<<<<<<<<<<<<<<<

AM0913996 1ARM7111088M2210241<<<<<<<<<<<<<<<06

4

ԱՅՍ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL:

16.05.2020

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS 5

Փաստացի բնակվում է ... 055
Սիս. Սարահարթ Շ 28 բն 21
«25» 11 2011
ստորագրություն